

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՂԱԶԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁԸ

Հ. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

I. Միջին հայերենի բաղաձայնական համակարգը ընդունված է ներկայացնել որպես տեղաշարժ-տեղափոխություն, այսինքն պատմականորեն առաջացած այնպիսի մի վիճակ, որի մեջ հին ձայնեղ ու խուլ հպականները փոխել էին իրենց տեղերը՝ անփոփոխ պահելով շնչեղ-խուլների շարքը:

Առանց խորանալու հարցի պատմության մանրամասների մեջ, ասենք, որ այդ համակարգի հանգստման լից առաջին ուսումնասիրությունը կատարել է Կարստը իր «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» աշխատության մեջ: Սակայն նշելի է նաև, որ այդ համակարգը նա վերապրել է ոչ թե ամբողջ միջին հայերենին, այլ նրա մի մասը կազմող կիլիկյան հայերենին: Կարստի մոտ կիլիկյան և միջին հայերեն հասկացությունները իրար չեն ծածկում, և այդ երևում է, մասնավորապես, նրա հետևյալ դիտողությունից. «Կիլիկյան հայերենը տարածված ոչ միակ բարբառն էր, թեև նա մեզ համար ս.մենալավ հայտնի և կարևոր միջին հայերենյան բարբառն է»¹:

Ակադ. Հր. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմության» մեջ, միջին հայերենի նկարագիրը տալիս, թեև հիմնականում հենվում է Կարստի վերը նշված աշխատության վրա, սակայն իր անձնական դիտողություններից ելնելով շեշտում է, այն միտքը, թե «վերջին անգամ պետք է կրկնել այն՝ ինչ որ ասացինք վերելում, թե միջին հայերենը մի ընդհանուր լեզու չէր, այլ թե կային Հայաստանում և Հայաստանից դուրս բազմաթիվ միջին հայերեն բարբառներ, որոնցից մեկն էլ կիլիկյան հայերենն էր, որ պետականության շնորհիվ բարձրացավ զրականության: Ուրիշ բարբառների հետքեր երևան են գալիս տարբեր վայրերում գրված գրքերի և արձանագրությունների մեջ»²: Աճառյանը միջին հայերենի բոլոր տարբերակների ուսումնասիրությունը կարևոր է համարում, ընդգծելով, որ «արձանագրությունների և հիշատակարարների մի կանոնավոր հետադուրություն պիտի կարողանա անշուշտ ավելի շատ բան ասել այս շրջանի հայերեն բարբառների վերաբերմամբ»³:

Միջին հայերենի նորագույն ուսումնասիրողներից պրոֆ. Ս. Ղազարյանը իր «Միջին հայերեն» աշխատության մեջ գրում էր. «Մենք չենք պաշտպանում այն լեզվաբանների կարծիքը, որոնք դառնում են, թե եղել են տարբեր միջին հայերեններ, թե միջին հայերենի այդ տարբեր ձևերից մեկը՝ կիլիկյան բար-

¹ J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen. Strassburg, 1901, էջ 5:

² Հր. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 253:

³ Նույն տեղում, էջ 254:

բաժնի գրականության աստիճանի բարձրացումը և պահպանվեց, իսկ մնացած ձևերը գրի չառնվեցին ու շահասան մինչև մեր ժամանակները»։ Այնուհետև՝ «...Կարստի ուսումնասիրությունը ոչ թե կիլիկյան բարբառի, այլ միջին հայերենի զարգացման մի փուլի ուսումնասիրությունն է»⁴։ Ընդունելով մի միասնական միջին հայերենի գոյությունը, պրոֆ. Ս. Ղազարյանը մյուս կողմից այդ լեզվին վերագրում է երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգ, որտեղ հին հայերենի ձայնեղ հպականները վերածվել էին շնչեղ-խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների (հին շնչեղ-խուլերի պահպանմամբ)։ Այդ միտքը առավել որոշակիությամբ արտահայտված է նրա «Հայոց լեզվի համառոտ պատմության»⁵, իսկ որոշ վերապահումներով՝ նաև վերը նշված «Միջին հայերեն» աշխատության մեջ⁶։

Մեր նպատակից դուրս է զբաղվել միջին հայերենի բնույթի, նրա խոսակցական հիմքի վերաբերյալ արտահայտած կարծիքների քննությամբ. այն մեզ շատ հեռուն կտաներ։ Սակայն հարկ է նշել, որ միջին հայերենի բաղաձայնական համակարգի իրական պատկերի բացահայտմանը մեծասյես խանգարել են լեզվագիտն այս շրջանի վերաբերյալ ստեղծված կանխակալ կարծիքները։ Ըստ վերը բերված րմբոնումների, եթե մի դեպքում բաղաձայնական համակարգի հոսատիճանությունը (հին խուլ և ձայնեղ հպականների տեղերի փոփոխությամբ) հատուկ է համարվում միայն կիլիկյան հայերենին և բաց է մնում հայերենի այլ տարբերակներում դրա բնույթի հարցը, ապա երկրորդ դեպքում այդ նույն համակարգը թեև վերագրվում է ամբողջ միջին հայերենին (թեկուզ և նրա զարգացման մի փուլին միայն), բայց միաժամանակ նույն լեզվին հատկացվում է նաև մի այլ՝ խլազուրկ երկաստիճան համակարգ։

Գուցե և հարցադրման այդպիսի անհստակության, կամ թիրևս Կարստի աշխատության ճնշող հեղինակության փաստով պետք է բացատրել այն հանգամանքը, որ գիտության մեջ, այնուամենայնիվ, միջին հայերենի բաղաձայնական համակարգ հասկացության տակ լռելյայն շարունակվում է հասկացվել կիլիկյանը։

Այստեղ անհրաժեշտ է ավելացնել նաև հետևյալը։ Առհասարակ միջին հայերենի և նրան նախորդած շրջանի հայերենի հպականների մեջ կատարված փոփոխությունների փաստը ինչ որ նոր գյուտ չէ։ Նույնիսկ Աճառյանը, որ V դարի հայերենի համար բացառում էր բարբառների գոյությունը, առանձին լեզվական տարբերությունների և, մասնավորապես, մեզ հետաքրքրող բաղաձայնների փոփոխությունների հաշվառմամբ ստիպված էր ընդունել դոնե ենթաբարբառների առկայությունը, նշելով, որ «դ > թ, օ > ց, բ > փ, մի խոսքով թրթռունի և թավի փոխանակությունը սովորական երևույթ էր հունաբանների ժամանակ (Չ դար)»⁷։ Էլ չենք խոսում Անանուն մեկնիչի (VII դար)՝ «էր իսկ ճշմարտապէս և ի տեսակի խօսիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ» հանրահայտ ասույթի մասին, որ ուղղակի վկայություն է հպականների մեջ տեղի ունեցած տեղաշարժերի, որը բերվում է բոլոր ուսումնասիրողների կողմից։

4 Ս. Ղազարյան, Միջին հայերեն, Երևան, 1960, էջ 92։

5 Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 258—259։

6 Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 167, 172։

7 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 135։

Ջնայած այս բոլորին, այնուամենայնիվ, միջին հայերենի՝ որպես հայոց լեզվի պատմական մի փուլի, բաղաձայնական համակարգի բնույթի և նրա տարբերականների հարցը առ այսօր մնում է բաց և կարոտ է քննության:

Սույն հոդվածում, նրա հնարավորության սահմաններում, փորձ է արվում մատենագրական սկզբնաղբյուրների նյութի օգտագործմամբ որոշ չափով լրացնել այդ բացը, միաժամանակ հավակնություն չունենալով սպառիչ պատասխան տալու այս կապակցությամբ առաջացող բոլոր հարցերին:

II. 1. Ուսումնասիրության գործը դժվարացնում է այն հանգամանքը, որ ուսումնասիրվող շրջանի լեզուն ներկայանում է զրավոր վիճակում և խիստ կաշկանդված լինելով հին լեզվի ավանդական նորմաներով, որոշակի ձգտում է հանդես բերում պահպանելու ուղղագրական հին կանոնները, և այդ իսկ տեսակետից լեզվական միավորների զրային արտահայտության մեջ տառերը ոչ բոլոր դեպքերում կարող են նրանց իրական հնչման չափանիշ լինել: Սակայն, մյուս կողմից, գրության մեջ հին ուղղագրական նորմաներից կատարվող շեղումները, օտար բառերի՝ հայերենում, ինչպես նաև օտար աղբյուրներում՝ հայերեն բառերի տառադարձությունները, — այս բոլորը հնարավորություն են տալիս հաստատելու որոշակի օրինաչափություններ: Այդ օրինաչափությունների բացահայտման համար կարելի է կիրառել որոշ սկզբունքներ, որպես պայմանական էլսկետ ընդունելով մեր ժամանակակից բարբառների հպականների մեջ կատարված փոփոխությունները, նկատի ունենալով, որ վերջիններս ինչ-որ բանով հիշեցնում են միջնադարյան տեքստերում հանդիպող բառաձևերը:

2. Հայտնի է, որ հայերենի ժամանակակից բարբառներում հին հպականների երեք շարքերի փոփոխությունները (կամ համապատասխանությունները ունեն հետևյալ արտահայտությունները (այստեղ և հետագայում նկատի ունենք հիմնականում րառասկզբի դիրքը)՝

ա) Հին եռաստիճանության⁸ պայմաններում ձայնեղ հպականների շարքը, բացի այն, որ ունի շնչեղ-ձայնեղացում և պարզ ձայնեղների պահպանում, փոխվել է նաև մյուս երկու շարքերի որակին, մի դեպքում՝ խուլերի ($p > p^h$, $q > k$, $q > t$ և այլն) և մյուս դեպքում՝ շնչեղ-խուլերի ($p > p^h$, $q > kh$, $q > th$ և այլն):

բ) Հին խուլերի շարքը, ընդհանրապես, եթե մի դեպքում մնացել է անփոփոխ, ապա մյուս դեպքում փոխվել է հակառակ ուղղությամբ՝ ձայնեղների ($ay > b$, $k > g$, $st > d$ և այլն):

գ) Հին շնչեղ-խուլերի շարքը ամենուրեք մնացել է անփոփոխ (այստեղ նկատի չունենք փոխադրեցական և դիրքային հնչյունափոխության առանձին դեպքերը):

Այսպիսով, ժամանակակից հայ բարբառների հպականների համակարգում այժմ արձանագրվում է չորս շարք՝ շնչեղ-ձայնեղներ, ձայնեղներ, խուլեր և շնչեղ-խուլեր:

3. Եթե պայմանականորեն ընդունելու լինենք, որ նշված տեղաշարժերը կարող էին տեղի ունեցած լինել նաև միջնադարում, ապա շատ բնական է մա-

⁸ Հին հայերենի (զրաբարի) համար պայմանականորեն ընդունում ենք եռաստիճան բաղաձայնական համակարգ (ձայնեղների, խուլերի և շնչեղ-խուլերի շարքերով), թեև այժմ եռաստիճանության սահմաններում ընդունվում է նաև ձայնեղների փոխարեն շնչեղ-ձայնեղների շարքը:

կարեբել, որ կատարված այդ փոփոխությունների հիմքի վրա խախտված պիտի լինեին նրանց գրավոր արտահայտության հին ձևերը: Իրոք, եթե, ասենք, խուլների շարքը տեղաշարժվել ու փոխվել էր ձայնեղների, ապա հին խուլերն արտահայտող գրանշաններն այժմ պետք է ստանային ձայնեղների արժեք: Այսպես նաև մյուս փոփոխությունների դեպքում: Հետևաբար, նկատի ունենալով վերը նշված տեղաշարժերի բնույթը՝ կարելի է որոշել, թե այս շրջանի պայթական և պայթաշփական հնչյունները հայերենի այբուբենի ինչ տառերով կարող էին արտահայտվել:

ա) Շնչեղ-խուլ հնչյունները մի կողմից կարող էին արտահայտվել մեսրոպյան այբուբենի փ, ֆ, ք, ց, չ տառերով, քանի որ, ինչպես ասվեց, ամբողջ հայերենում բաղաձայնների այդ շարքը (զոնե բառասկզբում) անփոփոխ է և դրանք այլ հնչյուններ արտահայտել չէին կարող: Մյուս կողմից, շնչեղ-խուլ հնչյունների նույն շարքը կարող էր արտահայտվել հայերենի ր, գ, դ, ձ, ջ տառերով: Գրության մեջ այս տեղի է ունենում այն սլարգ պատճառով, որ ձայնեղների փոփոխություններից մեկը շնչեղ-խուլ դառնալն է: Այն համակարգում (կամ համակարգերում), որտեղ հայերենի օ, ց, մ, յ, յ ձայնեղ հպականները փոխարկվել էին շնչեղ-խուլների, ր, գ, դ, ձ, ջ տառերով կարտահայտվեին քհ, kh, th, ց, ճ հնչյունները:

բ) Խուլ հպականները կարող էին արտահայտվել կամ հին խուլերն արտահայտող պ, տ, կ, ծ, ց տառերով, երբ այդ շարքը մնացած լիներ անփոփոխ, կամ ձայնեղների՝ ր, գ, դ, ձ, ջ տառերով, երբ դրանցով արտահայտված հնչյունները տեղաշարժված լինեին խուլների:

գ) Ձայնեղ հպականները կարող էին արտահայտվել կամ հին ձայնեղները ներկայացնող տառերով (ր, գ, դ, ձ, ջ), երբ դրանք մնացած լինեին անփոփոխ, կամ հին խուլների գրերով (պ, տ, կ, ծ, ց). երբ խուլերը տեղաշարժված լինեին ձայնեղների:

դ) Շնչեղ-ձայնեղները կարող էին արտահայտվել միայն ր, գ, դ, ձ, ջ շարքի գրերի միջոցով:

Ահա այս սկզբունքները նկատի ունենալով պետք է քննել և պարզել, թե միջնադարում պատմականորեն առաջացած ինչպիսի փոփոխություններ են արձանագրվում, և այդ հիմքի վրա բաղաձայնական ինչ համակարգեր կարելի է առանձնացնել:

Նախ քննենք արձանագրվող տեղաշարժերն ընդհանրապես, դրանք չկոնկրետացնելով առանձին համակարգերում:

III. 1. Եթե հին ձայնեղ հպականների շարքի համար արձանագրվել են օրինաչափ փոփոխություններ դեպի պարզ խուլների շարքը, ապա ակնհայտ է նաև, որ կան միջին հայերենի այնպիսի տարբերակներ, որոնց մեջ այդ բաղաձայնները պահպանում են իրենց հին որակը: Ձայնեղ հպականների անփոփոխ վիճակի պահպանումը հատկապես բացահայտվում է այն սկզբնաղբյուրներում, որոնց մեջ փոխառյալ բառերի օտարլեզվյան ձայնեղները հայերենում ևս արտահայտված են ձայնեղներով, և այդ այն դեպքում, երբ այլ տիպի սկզբը նաղբյուրներում դրանք ներկայանում են հին խուլերն արտահայտող տառերով: Այսպես, օրինակ՝ եթե մի կարգի սկզբնագրերում օրինաչափորեն ունենք հետևյալ բառաձևերը՝ արբ. burī = պուրձ (Սմբ. Տար.), հֆր. duc = տուկ (Ն. տ.) և այլն, իսկ այլ սկզբնաղբյուրներում այլ օրինաչափությամբ՝ duc = դուկ

(Անիի արձանգ․), նսւր] = րուրջ (ն. տ.) և այլ ձևերը⁹, ապա ականհայտ է, որ թեև երկու դեպքում էլ տարբեր տւոներով արտահայտված են նույն ձայնեղ հնչյունները, բայց ձայնեղությունը մի դեպքում նշված է հին խուլի, մյուս դեպքում՝ հին ձայնեղ տառի միջոցով։ Ինչ խոսք, որ երկու տառադարձություններից մեկը արձանագրում է խուլի ձայնեղացում, իսկ մյուսը՝ ձայնեղի արժեքի պահպանում։ Ինչպես կտեսնենք ստորև, միջին հայերենի որոշ տարբերակներում միանգամայն հետևողականորեն է կիրառվում տառադարձության ձայնեղ = ձայնեղ սկզբունքը. հետևաբար միջին հայերենի հպակսնների զրոնորումնե-րից մեկը նրանց ձայնեղության պահպանումն է։

Քննարկվող շրջանում ձայնեղ հպականների պատմական փոփոխու-թյուններից մեկը, որ ավելի լավ է ուսումնասիրված, նրանց խլացումն է։ Այդ երևում է նույնատիպ այն սկզբնաղբյուրներում, որոնց մեջ փոխառյալ բառերի օտարլեզվյան խուլ հնչյունները հայերենում հետևողականորեն ներկայացվում են մեսրոպյան ալբուբենի ր, գ, դ, ջ տառերով։ Այսպես, օրինակ՝ հֆր. plaid – րլայթ (Անս․), որից րլայթել «դատարանում պաշտպանվել» (ն. տ.), հֆր. privilege = բրվլիւժ «արտոնություն» (ն. տ.), հֆր. canne, cane = գան «երկա-րության շափ» (ն. տ.), հֆր. prince = բրինձ (Սմբ. Տար.), իտ. cantestabile = զուգուստապլ (ն. տ.), հֆր. chambrelan — ջամբուլայ սենեկապան» (ն. տ.), հֆր. chastier = ջաստել «պատժել» (ն. տ.) և այլն, և այլն։

Բառակղզի դիրքում օտարլեզվյան խուլ հպականների տառադարձումը հայերենի ձայնեղներով ինքնին նշանակում է, որ տվյալ համակարգի սահման-նւրում հայերենի հին ձայնեղները փոխվել էին խուլերի և բերված օրինակ-ներում ձայնեղներն արտահայտում էին ոչ թե իրենց նախկին հնչյունական արժեքը, այլ խուլ հնչյուններ։ Իսկ այս նշանակում է, որ միջին հայերենի բա-ղաձայնական համակարգի համար բացի վերը նշված՝ ձայնեղ հպականների շարքի անփոփոխ պահպանումից, առկա էր նաև սյդ շարքի մի նոր որակը՝ խլացումը։

3. Մատենադրությունը բավականին փաստեր է տալիս նաև ձայնեղ հպակսների մի այլ կարգի փոփոխության վերաբերյալ դա նրանց շնչեղ-խլացումն է։ Այս երևույթը առավել առատ փաստերով արձանագրվում է հատ-կապես բառամիջի և բառավերջի դիրքերում, երբ մի կողմից՝ տեղի ունեցած հնչյունափոխությունը իր անմիջական սրտահայտությունն է ստանում շնչեղ-խուլները ներկայացնող տառերով, ինչպես՝ Սեփաստիա, գուփ (<դուր), Գէորգ, փափա՛, Սարժիս, թարժման, վարժապետ, կնո՛շ, տիրո՛շ, բրո՛շ և այլն, և այլն, իսկ մյուս կողմից՝ երբ հին շնչեղ-խուլ հնչյունները արտահայտվում են ձայ-նեղների տառերով, ինչպես՝ դազաբար, տգնութիւն, զուարդ, դուարդութիւն, վայելչութիւս, ընթերձող, էրէձ (<երէց) և այլն, և այլն։ Երկու դեպքերում էլ զրոյթյան տարբեր միջոցներով արձանագրվում է միևնույն երևույթը՝ ձայնեղ հպականների շնչեղ-խլացումը։ Սակայն ձայնեղների շնչեղ-խլացումը որպես համակարգային երևույթ միայն այս տիպի փոփոխությունների փաստերով չի կարելի լրիվ հիմնավորված համարել, քանի որ բառամիջում և բառավերջում շնչեղ-խլացման երևույթը (ինչպես այդ հայտնի է մեր ժամանակակից բար-րաոներից) տեղի է ունենում նաև տարբեր բաղաձայնական համակարգերի

⁹ Այս տիպի օրինակների շարքը տե՛ս ստորև։

սահմաններում: Ուստի և այն, որպես համակարգային երևույթ, պետք է հիմնավորվի առավելապես րառասկզբի դիրքի օրինակներով:

Բառասկզբի դիրքում ձայնեղ հպականների շնչեղ-խլացումը ևս դրսևորվում է երկու ձևով. նախ, երբ կատարված հնչյունափոխությունը արձանագրվում է ըստ արտասանության. այսպես, օրինակ՝ «...ողորմեա Յովաննէս քահանայի և գրչի... այլ և Եփրեմի մանկագոյն քահանայի, որ հայցեցին գրելի Գիրքս» (Գ. Հովս. հձ, 855, 1227 թ., տեղն անհայտ), «...թիւ Բրքիս է հայոց թիւէն ԶԻԱ (ԺԴ. հձհ., 181, 1322 թ.), «Ես տիկնաց տիկին, դուստր Քրիզորոյ Մագիստրոսին (Վիմ. տար., 22, 1042 թ., Տեկոր. Եթե օրինակը վստահելի է). ավելի վաղ շրջանի վկայություն է՝ «ի ձեռաց Թաթի կորապաղատի» (Դ. Հովս. հձ. 166, 999 թ., Կոզովիտ) և այլն: Բերված վկայություններում գիրք, Գրիգոր, Դաւիթ բառերի բառասկզբի հին ձայնեղ հնչյունները ըստ արտասանության տառադարձվել են շնչեղ-խուլերն արտահայտող տառերով (քիրք, Քրիզոր, Թաւիթ): Եվ քանի որ հին շնչեղ-խուլերի շարքի անփոփոխ մնալու պատճառով նրանց գրանշանները այլ հնչյուններ արտահայտել չէին կարող, ուստի և որոշակի է, որ բերված օրինակներում արձանագրվում է ձայնեղ հպականների շնչեղ-խլացման երևույթը:

Այս նույն բանը գրություն մեջ արտահայտվում է և մի այլ եղանակով՝ երբ բուն շնչեղ խուլ հնչյունը գրվում է ձայնեղի տառով. այսպես, օրինակ՝ «մատենեցաւ աշխարհն հայոց ի ձեռն խուժադոժ աղգացն, որ կոչի Ղաղար» (Գ. Հովս. հձ., 931, 1238 թ., Հոռմկլայ), «... ի տեառն Դադէոսի ժամանակիս (ն. տ. 166, 999 թ., Կոզովիտ. նույն գրչի մոտ՝ նույն էջում զուգահեռաբար նաև՝ Թադէոս), «...յոգնամեղ և բցուն գրչի Խաչատրոյ» (Ժղ հձն. 63, 1309 թ.) և այլն: Այստեղ քաքաւ ժողովրդի անունը, որ տառադարձված է Ղաղար ձևով (շատ սովորական թաթար գրության փոխարեն, որ հանդիպում է այլուր), որոշակիորեն նշում է հին ձայնեղի շնչեղ-խուլ արժեքը: Թադէոս և փցուն բառերում առկա շնչեղ-խուլերի արտահայտումը ձայնեղներով նույնպես նշան է ձայնեղների շնչեղ-խլացման, քանի որ շնչեղ-խուլ հնչյունները որևէ տեղաշարժի չէին ենթարկվել: Հատկանշական է, որ ինչպես վերը նշված Թաւիթ (<Դաւիթ), ս.յնպես և բերված Դադէոս բառաձևերը հանդիպում են նույն գրչի հիշատակարանում:

Այսպիսով, միջին հայերենի ձայնեղ հպականների պատմական փոփոխություններից մեկն էլ նրանց շնչեղ-խլացումն է:

IV. Խուլ պայթականներն ու պայթաշփականները, ինչպես վերն արդեն ասվել է (նկատի ունենալով բարբառներում այս շարքի հնարավոր փոփոխությունները), կարող էին ներկայանալ երկու վիճակում. մի դեպքում մնալ անփոփոխ, մյուս դեպքում՝ փոխվել ձայնեղների: Անփոփոխ դրությունը գրության մեջ այլ կերպ չէր կարող արտահայտվել, քան ավանդական ուղղագրությամբ: Ըստ որում, խուլերի անփոփոխ մնալը հնարավոր էր մի կողմից հին Խաաստիճանության սլահպանման պայմաններում և մյուս կողմից՝ ձայնեղադուրկ երկաստիճան համակարգում:

Հայտնի է նաև, որ խուլերի անփոփոխ վիճակին զուգահեռ միջին հայերենի շրջանում առկա էր նաև խուլերի տեղաշարժը դեպի ձայնեղների շարքը: Այս երևույթը հանգամանորեն ուսումնասիրված ու բացահայտված է հատկապես այն փոխառյալ բառաձևերի միջոցով, որոնց մեջ փոխատու լեզվի ձայնեղ հպականները տառադարձված են հայերենի հին խուլերն արտահայտող տա-

ներով, այսինքն օտարլեզվյան b, d, ց, ի հնչյունները ներկայացված են ա, տ, կ, ց գրերով, ինչպես, օրինակ՝ հֆր. abil=պայլ (Անս.), որից և պայլութիւն (ն. տ.), հֆր. double—տուպլ (ն. տ.), արբ. ÷urj = պուրճ (Սմբ. Տար.), արբ. ևւզ=պուկ (Սմբ. Դատ.), արբ. darba = տարպայ (Անս.), արբ. daithar = տիֆ-թար (ն. տ.), արբ. duraĭ = տուռայճ (Մխ. Հեր.), հֆր. lige = լիճ (Անս.), որից և լճութիւն (ն. տ.), սնլիճ (ն. տ.), արբ. ĭulab = ճուլապ (Մխ. Հեր.) և այլն, և այլն:

Ինչպես կարելի է նկատել, խուլերի ձայնեղացումը հատուկ էր ոչ միայն բառասկզբի, այլև բառի մեջ գրված բոլոր գիրքերին, որով և պատմական այս փոփոխությունը ավելի ընդհանրական բնույթ է ստանում:

V 1. Եթե ընդհանրացնելու լինենք վերը շարադրվածը, ապա միջին հայերենի համար, բացի հին եռաստիճանության՝ ձայնեղ և խուլ հպականների շարքերի պահպանման վիճակից, պետք է արձանագրել նաև այդ շարքերի հետևյալ փոփոխությունները. ձայնեղ պայթականներն ու պայթաչփականները մի դեպքում փոխվել էին խուլերի, մի այլ դեպքում՝ շնչեղ-խուլերի. խուլ հպականները փոխվել էին ձայնեղներին:

Այս տեղաշարժերը, բնականաբար, ստեղծում էին պատմականորեն ձևավորված տարբեր բաղաձայնական համակարգեր, որոնք իրենց զգացնել են տալիս սկզբնադիր աղբյուրներում:

2. Այդ համակարգերից, ինչպես արդեն ասվել է, գիտությունը ավելի լավ հայտնի է այսպես կոչված կիլիկյանը: Միջին հայերենի այս տարբերակում օտար բառերի տառադարձման մեջ արևմտի մի սկզբունքի կիրառումը, ինչպես, մի կողմից՝ bail = պայլ, baron = պարոն, ÷arnier = պաներ, double = տուպլ, darba = տարպայ և այլն, և մյուս կողմից՝ plaid = բլայթ, privilege = բրվլիճ, cane = գան, chastier = չաստել և այլն, պարզորոշ ակնարկում է հին ձայնեղ հպականների շարքի տեղաշարժը դեպի խուլերը և հին խուլերին՝ դեպի ձայնեղները, պահպանելով եռաստիճանությունը՝ միայն թե հին ձայնեղների և խուլերի տեղերի փոփոխությամբ:

Այս համակարգը ամենայն որոշակիությամբ արտահայտված է կիլիկյան մատենագրության մեջ, ինչպես, օրինակ՝ Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք», «Տարեգիրք», թարգմանական «Անսիղք Անտիոքայ» աշխատություններում, մանր ժամանակագրություններում, դաշնագրերում, հիշատակարաններում և այլուր: Ամենայն հավանականությամբ այս համակարգը հատուկ էր ոչ միայն կիլիկյան պետականության շրջանակներում գործածվող հայերենին, այլև Արևմտյան Հայաստանի նրա այլ տարբերակներին:

3. Միջին հայերենի մեջ պետք է առանձնացնել նաև եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգ, որի մեջ հին ձայնեղների, խուլերի և շնչեղ-խուլերի շարքերը պահպանվել էին անփոփոխ: Այս համակարգի բուցահայտումը թեև դժվարանում է այն հանգամանքով, որ իր արտահայտման ձևավերով համընկնում է ավանդական գրության հետ, սակայն վերը (V, 2) նկարագրված համակարգի ֆոնի վրա, որտեղ ձայնեղներն ու խուլերը գրության մեջ արտահայտվում էին իրենց հին արժեքներին՝ հակառակ գրանշաններով, եռաստիճան անտեղաշարժ համակարգը բացահայտվում է հենց նրանով, որ այս դեպքում օտարլեզվյան հնչյունները ներկայացվում են իրենց հին համապատասխանություններով: Որպես բնորոշ օրինակ կարելի է բերել Մատենագրարանի № 7151 ձեռագրում պահպանված արաբերեն-պարսկերեն-հայերեն

բառառանի¹⁰ մեջ օտար բառերի տառադարձությունը: Բառարանը թեև անավարտ է և ընդգրկում է ۱) ب ت տառերով սկսվող արաբերեն բառեր միայն, բայց հատկապես նրա պարսկական մասը հնարավորություն է տալիս որոշելու բառասկզբի դիրքում հպականների ունեցած արժեքները: Ինչպես կտեսնենք ստորև բերվող օրինակներում, պարսկերենի b, g, d, j, ձայնեղ հպականները ոչ միայն բառասկզբում, այլև բառամիջում և բառավերջում նույնպես, համապատասխանաբար տառադարձված են հայերենի բ, գ, դ, ջ տառերով, որ ինքնին նշանակում է, թե այս համակարգում ձայնեղների տեղաշարժեր չէին կատարվել: Ահա մի շարք օրինակներ (ուղիղ փակագծերում տրվում է արաբատառ գրությունը և դրանց տառադարձությունը):

բզուրգ/թըր — մեծագոյն [بزرگتر — buzurgthar]

բըզրդըն գրիֆ/թըն — յանձն առնուլ [بگردن گرفتن — bagardan girifthan]

բազ գրդանիդըն — դարձեալ շրջեցուցանել [باز گردانیدن — bāz gardanidan]

բէրուն ավըրդըն — արտաքս բերել [بیرون آوردن — birun avardan]

գուզըշ/թըն — անցանել [گزشتن — guzasthan]

գնդում — ցորեան [گندم — gandum]

դաւթան — սիրելիք [دوستان — dusthan]

դուշման — թշնամիք [دو دشمنان — dusmanan]

դուրի — հեռաւորութիւն [دوری — duri]

ջահդ քրդըն — ջանս առնել [جهد کردن — jahid khardan] և այլն:

Անփոփոխ վիճակ արձանագրվում է նաև շնչեղ-խուլների տառադարձության մեջ. այսպես, օրինակ

փէշ ամըդըն — յառաջ գալ [پیش آمدن — phis amadan]

քմ/թըր — պակասագոյն [کمتر — khamthar]

քինի քշիդըն — քէն քարշել [کینه کشیدن — khini khashidan]

փասուխ դադըն — պատասխանել [پاسخ دادن — phasux dadan]

փաքի դիլ — սրբութիւն սրտի [دل پاک — phakhi dil] և այլն:

Պարզ խուլների վիճակը տառադարձություններում արտահայտված չէ, քանի որ պարսկերենը չունի այդ հնչյունները: Սակայն հայերենի այս տարբերակում խուլ հպականների անփոփոխ մնալը որևէ կասկած չի հարուցում, քանի որ դրանց տեղաշարժման դեպքում (իսկ եթե տեղաշարժվեին, ապա միայն դեպի ձայնեղների շարքը) կխախտվեր տառադարձման միասնական սկզբունքը և օտարլեզվյան ձայնեղները կարտահայտվեին հայերենի հին խուլերն արտահայտող տառերով: Բայց այս բնագրում հետևողականորեն կիրառված է տառադարձության վերը նշված սկզբունքը և ձայնեղները պահպանված են բառի մեջ զբաղեցնող դիրքերում:

¹⁰ Ձեռագիրը գրված է XIV դարում, Սյունիքում: Այս բառարանի վրա մեր ուշադրությունը հրավիրել է Մատենադարանի գիտաշխատող Հ. Ամալյանը:

Այսպիսով, բացի կիլիկյան եռաստիճան տեղաշարժ-տեղափոխությունից, միջին հայերենում արձանագրվում է նաև եռաստիճան անտեղաշարժ համակարգ, հին ձայնեղ, խուլ և շնչեղ-խուլ հպականների շարքերի անփոփոխ պահպանմամբ:

4. Եթե վերը նշված արաբերեն-պարսկերեն-հայերեն բառարանի մեջ օտարլեզվյան ձայնեղ հպականները բառի մեջ գրաված բոլոր դիրքերում արտահայտվում էին նույն արժեքներն ունեցող տառերով, ապա կան սկզբնագիր աղբյուրներ, որոնք օտարլեզվյան ձայնեղների բառասկզբի և բառամիջի տառադարձման մեջ սկզբունքային տարբերություններ են հանգես բերում: Բառասկզբի դիրքում այդ հնչյունները արտահայտվում են հայերենի ձայնեղ հպականների միջոցով, մինչդեռ բառամիջում և բառավերջում՝ խուլ հպականներով: Այսպես, օրինակ՝ 4. Երզնկացու տաղերում (նկատի ունենք առավել վաղ ընդօրինակությամբ հասած բնագիրը) բառասկզբի դիրքում ամենուրեք ունենք՝ bahar=բահար «գարուն», bašar—բասար «իմաստուն», bišumar—բէշմար «անհաշիվ», bimar=բիմար «հիվանդ», gul ba šakhar=գուլ բալշաքար «շաքարով վարդ», քանաքնար=գունահար «մեղավոր», doulat—դովլաթ «կալք, ունեցվածք», dasthan—դաստան «պատմություն», jafa—ջաֆա «անիրավություն», jumla=ջումլայ «ամբողջ, բոլոր», juhar=ջահար «գոհար» և այլն, և այլն,—արտահայտված հայերենի ձայնեղներն արտահայտող տառերով, մինչդեռ բառամիջի և բառավերջի դիրքերում ունենք՝ bixabar—բէխապար, bidār=բէտար «արթուն, զգաստ», thaլ=թաճ «թագ», thadbir=թտպիր «միջոց», qalb=ղալպ «սուտ, կեղծ, խարդախ», qabul—ղապուլ «ընդունելի», mailis=մալիս «ժողով, հավաքույթ», murad—մուրատ «իղձ, ցանկություն», naqd=նաղտ «կանխիկ», šadī—շատի «ուրախություն», jallad=ջալատ «հահիճ», phulad=փուլատ «պողպատ» և այլն, և այլն, երբ օտարլեզվյան նույն հնչյունները (ձայնեղ հպականները) ներկայացված են հին խուլների տառերով:

Ինչո՞վ բացատրել տարբեր դիրքերում գրության այս երկվությունը: Կասկած չի կարող լինել, որ թե՛ բառասկզբում և թե՛ բառամիջում ու բառավերջում գրության տարբեր ձևերով արտահայտված են օտարլեզվյան նույն ձայնեղ հնչյունները: Բայց ինչո՞ւ նույն հնչյունների համար բառասկզբը օրինաչափորեն ունի բ, գ, դ, ջ գրությունը, մինչդեռ բառամեջը և բառավերջը՝ պ, տ, կ, ճ: Տարբեր դիրքերում միևնույն հնչյունները ձայնեղ և խուլ տառերով տառադարձելը ենթադրել է տալիս, որ բառասկզբի և ոչ բառասկզբի ձայնեղները յուրեք բնույթով տարբեր էին: Այդ տարբերությունը այլ բան չէր կարող, քան շնչեղության և ոչ շնչեղության հակադրությունը: Բառասկզբում բ, գ, դ, ջ տառերով արտահայտված են շնչեղ-ձայնեղներ, իսկ բառամիջի և բառավերջի դիրքերում՝ պ, կ, տ, ճ տառերով՝ պարզ ձայնեղներ: Այս միաժամանակ նշանակում է, որ ոչ բառասկզբի դիրքում պարզ խուլները, առավել անկախ դիրքերում, հնչյունափոխվել էին պարզ ձայնեղների՝ նույնանալով նույն դիրքերում հանդես եկող հին ձայնեղների հետ: Բառասկզբում խուլները մնացել էին անփոփոխ: Այս համակարգը, այսպես կոչված, քառաստիճան է, որտեղ առկա են շնչեղ-ձայնեղներ (համապատասխան հին ձայնեղներին՝ այն էլ միայն բառասկզբում), պարզ ձայնեղներ (համապատասխան հին ձայնեղներին և առաջացած հին խուլներից՝ այն էլ միայն ոչ բառասկզբի դիրքում), պարզ խուլներ (որոնք պահպանվել են միայն բառասկզբում) և շնչեղ խուլներ (որոնք մնացել են անփոփոխ և հանդես են գալիս բոլոր դիրքերում):

Այս համակարգը իր բնույթով հար և նման է մեր օրերում արձանագրված Կարնո և Մշո բարբառների բաղաձայնական համակարգերին:

5. Սկզբնաղիք աղբյուրների փաստական նյութի հիման վրա հնարավոր է լինում առանձնացնել մի համակարգ ևս. դա երկաստիճան խլաղուրկ համակարգն է, երբ ձայնեղ հպականների շարքը տեղաշարժվել է դեպի շնչեղ-խուլերի շարքը, խուլ հպականները դարձել են ձայնեղ, իսկ հին շնչեղ-խուլերը մնացել են անփոփոխ: Այսպիսով այս համակարգում կան ձայնեղներ (առաջացած հին խուլերից) և շնչեղ-խուլեր (առաջացած հին ձայնեղներից և հին շնչեղ-խուլերի պահպանմամբ): Կասկածից դուրս է, որ նման համակարգ առկա է միջին հայերենի որոշ տարբերակներում:

Վերը (III, 3) խոսք եղավ այն մասին, որ հին հայերենի ձայնեղ հպականների փոփոխություններից մեկն էլ նրանց շնչեղ-խլացումն է: Բերված օրինակներից հատկապես նրանք, որոնք վերաբերում էին բառասկզբի դիրքին, հենց այդ համակարգի գոյության արտահայտությունն են, քանի որ տվյալ տեղաշարժը ենթադրում է միայն երկաստիճան խլաղուրկ համակարգ:

Երկաստիճան խլաղուրկ բաղաձայնական համակարգ որոշակիորեն ընկած է միջնադարյան հայտնի բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժըշկութեան» հեղինակային բնագրի (Մատենադարանի № 8871 ձեռագիր, գրության թվականը 1459) հիմքում: Այստեղ հայերենի շնչեղ-խուլ հնչյունները արտահայտվում են ինչպես իրենց համապատասխան, այնպես և ձայնեղներն արտահայտող տառերով: Այսպես, օրինակ՝ բառասկզբում գրության մեջ շփոթվում են ր և դ տառերը. թռչել||դռչել, թռչոց||դռչոց, թաժայ||դաժայ. ըստ որում վերջինս փոխառություն է և փոխատու լեզվում ունի լին: Նույն երևույթը առկա է նաև բառամիջի դիրքում. ինչպես՝ վաթել||վադել, երթալ||երդալ, աթալ||ադալ, բառավերջում՝ ստամոթ||ստամոգ, կամօթ||կամազ և այլն: Մի քանի բառերում ձայնեղների շնչեղ-խլացումը գրության մեջ արտահայտվում է հետևողականորեն՝ կնոշ, տիրոշ, աղչիկ և այլն: Բառամիջի համար կան նաև փոխառյալ բառերի օրինակներ, երբ օտարլեզվյան kh-ն տառադարձվում է և՛ ք-ով, և՛ գ-ով, ինչպես՝ հաքիմ||հագիմ, (hakhim), զուքամ||զուգամ (zukham):

Այս համակարգում խուլերը տեղաշարժվել էին ձայնեղների. այդ երևում է փոխառյալ բառերում օտարլեզվյան ձայնեղների տառադարձությունից, որը հետևողականորեն իրականանում է հայերենի հին խուլերն արտահայտող տառերի միջոցով, ինչպես, օրինակ՝ պապ (<bab), պոխար (<buxar), պալղամ (<balgam), տարպալ (<darba), ճուլապ (<Julab) և այլն: Նման տառադարձությունն իրականացվում է նաև բառամիջում և բառավերջում. ինչպես՝ շարպաթ (<šarbat), սավտալ (<savda), շարապ (<šarāb) և այլն:

Դրության վերը բերված ձևերը և տառադարձությունները մատնում են այս ձեռագրի և նրա հեղինակի լեզվի հիմքում ընկած բաղաձայնական համակարգի էությունը, թեև այն գրված է ավանդական ուղղագրության պահպանման միտումով: Այդ համակարգում, ինչպես ցույց են տալիս փաստերը, ոչ միայն բառասկզբում, այլև բառի մեջ գրված բոլոր դիրքերում էլ հայերենի ձայնեղ հպականները փոխվել էին շնչեղ խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների:

VI. Այսպիսով, միջին հայերենի ժամանակաշրջանի համար այժմ կարելի է առանձնացնել հետևյալ համակարգերը՝ եռաստիճան անտեղաշարժ, եռաստիճան տեղաշարժ-տեղափոխությամբ, քառաստիճան, երկաստիճան խլաղուրկ: Կարելի է ենթադրել նաև երկաստիճան ձայնեղաղուրկ, եռաստիճան

խլացուրկ և այլ համակարգեր, բայց առայժմ այդ տիպի համակարգերի համար հիմնավոր փաստեր չկան, կամ, որ ավելի ճիշտ է, դրանց բացահայտման համար որոշակի սկզբունքների բացակայությունը անհնար է դարձնում տեսնելու դրանք մատենագրական աղբյուրներում:

Մյուս կողմից դեռևս բաց են մնում նաև լերը նշված չորս համակարգերի տարածվածության սահմանների որոշման, նրանց տեղայնացման հետ կապված հարցերը, որոնք պահանջում են հետազոտաֆունասիրական և տեքստաֆունական մանրակրկիտ աշխատանք:

ՀԱՄԱՌՈՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անիի արձանագր. — Դիվան հայ վիմագրության, պր. 1-ին, Երևան, 1967:

Անս. — Անսիզ Անտիոքայ, Վենետիկ, 1876:

Բ. Հովս. հձ. — Գար. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951:

Ժղ հձհ — Լ. Խաչիկյան, Ժղ գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950:

Մխ. Հեր. — Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Մատենադարանի ձեռ. № 416, գրչ. ժամ.՝ 1279:

Սմբ. Տար. — Սմբատ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956:

Վիմ. տար. — Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913:

К ВОПРОСУ О КОНСОНАНТИЗМЕ СРЕДНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА.

О. Д. МУРАДЯН

(Р е з ю м е)

В лингвистической литературе по среднеармянскому языку хорошо описана лишь киликийская система смычных, так называемое второе передвижение, в котором древнеармянские звонкие смычные перешли в глухие, а глухие — в звонкие. Киликийская система консонантизма очень часто ошибочно рассматривается как общая для среднеармянского языка. Однако, как показывает материал первоисточников, помимо киликийской системы смычных, в период среднеармянского языка существовали и другие системы консонантизма, аналогичные некоторым современным армянским диалектам. Так, в некоторых источниках мы устанавливаем трехрядную систему смычных, где без изменения сохраняются древнеармянские звонкие, глухие и глухие придыхательные. Очень отчетливо выделяется также четырехрядная система, где имеются звонкие придыхательные, простые звонкие, простые глухие и глухие придыхательные. Третья система характеризуется наличием двух рядов смычных: звонких (происшедших от древнеармянских простых глухих) и глухих придыхательных (соответствующих древнеармянским глухим придыхательным и происшедших от древнеармянских звонких).

Таким образом, в период среднеармянского языка можно выделить по крайней мере четыре диалектные системы консонантизма.